



**«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ Խոսքային հատորդակցում  
Անգլերեն բանավոր խոսքի ուսուցումը որպես խոսքային հատորդակցման  
հիմնահարց**

**Առարկան՝ Անգլերեն**

**Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Սոլոմոնյան**

**Ուսումնական հաստատություն՝ Վ. Համբարձումյանի անվան թիվ 10 հիմն.  
դպրոց**

**Երևան 2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1.Օտարալեզու բանավոր խոսքի ուսուցման ժամանակակից մոտեցումները.....	5
2.Բանավոր խոսքի ուսուցման լեզվական և հարալեզվական միջոցները.....	9
3,Անգլերեն բանավոր հաղորդակցման արդյունավետությունն ապահովող գործոնները.....	12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	19

## Ներածություն

**Չետագոտության արդիականությունը.** Մշակութային, միջմշակութային, տնտեսական, հասարակական ու առևտրային կապերի զարգամանը զուգընթաց օտար լեզուների իմացությունն այսօր դարձել է կյանքի պահանջ: Միջազգային շփման հարթակում կարևորվում է հատկապես անգլերենի իմացությունը և մասնավորապես բանավոր անգլերենը: Այսպիսով անգլերեն բանավոր խոսքի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցումն է , խոսքային հմտությունների ձևավորումն ու զարգացումը, իսկ առաջնային խնդիրը՝ մշակել այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի լեզվի արագ ու արդյունավետ յուրացմանն ու կիրառմանը:

Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման մեթոդի ընտրությունը կախված է ուսուցման նպատակից, սովորողի ընդունակությունից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչի հմտությունից: Ավանդական դասարաններում աշակերտները հիմնականում պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործընթախն, այսինքն՝ լսում են դասավանդողին, երբեմն դիտում են ցուցադրվող սլայդը, կամ ընթերցում դասագիրքը, վերարտադրում մատուցված կամ ընթերցած նյութը: Արդյունքում նման պասիվ ներգրավվածությունը ձանձրացնում է աշակերտներին, խոչնդոտում գիտելիքի յուրացմանն ու մտապահմանը: Մյուս կողմից, ավանդական դասարաններում, որտեղ ներառված են քսան և ավելի երեխաններ, հեշտ չէ կազմակերպել ակտիվ ուսուցում, քանի որ այս դեպքում աղմուկը կարող է խոչնդոտել դասապրոցեսին:

Ակտիվ ուսումնառությունն իրականացնելու համար դասավանդողը պետք է լինի մեթոդապես գրագետ ու ճկուն, կիրառի այնպիսի ռազմավարություն, որը կխթանի սովորողի ակտիվությունը, կխրախուսի նրան՝ անկաշկանդ մասնակցելու ուսումնական գործընթացին: Դրանք աշակերտին օգնում են ձևավորել և արտահայտել սեփական միտքը: Միաժամանակ, այդ մեթոդները սովորեցնում են հարգել ուրիշի կարծիքը, լսել, արձագանքել և համագործակցել, ուղղորդում են աշակերտի ուշադրությունը, հղկում գրավոր և բանավոր խոսքը: Ուսուցման ակտիվ մեթոդները փոխում են նաև ուսուցչի պահվածքը և դիրքորոշումը: Նա ավելի է կարևորում դասի նպատակի հստակ ձևակերպումը, դասի ամբողջ ընթացքի պլանավորումը, կիրառվող մեթոդների հստակ կապը դասի փուլերի և նյութի հետ:

**Չեռագոտության նպատակն** է՝ բացահայտել անգլերենի ուսուցման գորընթացում բանավոր խոսքի ուսուցման ռազմավարությունների բովանդակային և գործառական բնութագրերը և հստակեցնել դրանց համապատասխանող հնարները:

**Չեռագոտության խնդիրները՝**

1. Ուսումնասիրել խոսակցական լեզվակաղապարների ուսուցման հիմնախնդիրն վերաբերող լեզվաբանական, հոգելեզվաբանական, լեզվամշակութաբանական և մեթոդական գրականություն:
2. Համեմատել հաղորդակցական քերականության, խոսակցական բառապաշարի և հնչյունական կաղապարների ուսուցման մոդելները և մշակել լեզվանյութի ուսուցման ներառարկայական համակարգ:
3. Բացահայտել հաղորդակցական մոտեցման բովանդակային առանձնահատկությունները խոսակցական լեզվակաղապարների ուսուցման հիմնախնդրի տեսանկյունից:

## 1. Օտարալեզու բանավոր խոսքի ուսուցման ժամանակակից մոտեցումները

Ինչպես գիտենք, օտար լեզուների ուսուցման կազմակերպումն իրականացվում է խոսելու, գրելու, ունկնդրելու, ընթերցելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց, որոնք դասակարգվում են երկու խմբի՝ ընկալողական (ռեցեպտիվ) և արտադրողական (պրոդուկտիվ): Ընկալողականը ներառում է ունկնդրությունը և ընթերցանությունը, իսկ արտադրողականը՝ խոսողությունն ու գրությունը: Ընկալողական գործունեությունը ենթադրում է տեղեկատվության ընդունում, մշակում և յուրացում: Արտադրողական գործունեությունն ուղղված է սեփական մտքերը հաղորդելուն, գրավոր կամ բանավոր հաղորդակցության մեջ սեփական մտքերն արտահայտելուն:

Օտար լեզվի ուսուցման կարևորագույն պայման է զարգացնել սովորողների միջմշակութային հաղորդակցությունը: Միջմշակութային հաղորդակցությունը ակնկալում է տարբեր մշակույթներ ներկայացնող հանրույթների հաղորդակցություն: Ըստ Ս. Գ. Տեր-Մինասովայի՝ 'Օտար լեզվի ամեն մի դաս մշակութային խաչմերուկ է, միջմշակութային հաղորդակցության գործընթաց, քանի որ յուրաքանչյուր օտար բառ արտացոլում է օտար աշխարհ և օտար մշակույթ' ( Тер-Минасова 2000:25):

Բանավոր խոսքի ուսուցման կարևորագույն պայման է օտարալեզու շփման մշակույթի ուսուցումը (М. О. Фаенова 1991):

Օ. Ա. Արտեմովան և Մ. Լ. Վայսբուրդը մշակել են օտար լեզվով բանավոր խոսքի ուսուցման ընթացքում ուսումնախոսքային իրադրությունների կիրառման մեթոդիկան:

Հաղորդակցական մոտեցման շրջանակներում վաղուց է լուծված բանավոր խոսքի ուսուցման նպատակներն ու խնդիրները: Այդ խնդիրները շարունակական ճշգրտման անհրաժեշտություն ունեն, կախված այն բանից, թե որտեղ, ինչ դասընթացի շրջանակներում է իրականացվում անգլերենի ուսուցումը:

Բանավոր խոսքի զարգացումը կարևորվում է նրանով, որ այն հաղորդակցման ունակությունների ձեռք բերման անհրաժեշտ և պարտադիր պայման է դառնում, հատկապես երբ խոսք վերաբերում է անգլերենի ուսուցմանը՝ օտար լեզուների ֆակուլտետներում:

Բանավոր խոսքի գործառական և բովանդակային բնութագրերը ներկայացնելու համար անհրաժեշտ է սահմանել և վերլուծել այն հակասությունները, որոնք էական դեր

են խաղում նշված հասկացությունները սահմանելու, դասակարգելու և այն զարգացնելու մեթոդական համակարգ մշակելու ընթացքում:

Այդ առումով, կարևորվում է «շփում» հասկացությունը: Այն սահմանելիս, լեզվաբանները և մեթոդիստները համեմատում են նշված հասկացությունը «խոսել» կամ «խոսողություն», «հաղորդակցություն» հասկացությունների հետ:

Բանավոր շփումը դիտարկվում է որպես սուբյեկտներին բնորոշ փոխհարաբերությունների եղանակ, ինչպես նաև մարդկանց հետ փոխհարաբերությունների կենսաձև (ՓՇ 1988: 255):

Այսպիսով, շփումը սուբյեկտների փոխհարաբերությունն է ենթադրում, իսկ խոսողությունը սահմանափակվում է բանավոր խոսքի վերարտադրությամբ՝ ըստ տրված նմուշների:

Կարևոր է այն, որ շփումը ներկայանում է ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային միջոցներով: Մասնագիտական գրականության մեջ հանպատրաստից կամ չպատրաստված երկխոսական տեքստ է համարվում ինքնաբերական խոսքը: Ա. Մ. Անտիպովը մեկնում է այն որպես հանպատրաստից երկխոսական տեքստի բանավոր տեսակ (Антипова 1989: 61-75):

Կարևոր եզրահանգում է այն, որ շփման կինետիկ միջոցները /ժեստեր, դիմախաղ, մնջախաղ, պրոկսեմատիկա/ համարվում են շփման ոչ խոսքային միջոցներ և կարևոր պայման են հաղորդակցական գործընթացի իրականացման համար: Կարևոր պահանջ է այն, որ դրանք պետք է ուսումնասիրվեն խոսքային միջոցների հետ:

Այսպիսով, ինքնաբերական խոսքն ունի բանավոր շփման բոլոր բնութագրերը և միավորում է իր մեջ խոսքային և ոչ խոսքային շփման միջոցները:

Բավականին դժվար է օտարալեզու բանավոր շփում իրականացնելու համար լեզվակիրներին բնորոշ լռության, դադարների, դադարներին փոխարինող նշույթների իմաստը հասկանալը: Օտարալեզու խոսքին բնորոշ է բազում խոսքային դադարներ, որոնք «իմաստավորվում» են հարալեզվական միջոցներով: Երբեմն այդ դադարները լրացնում են ժեստերով, դիմախաղով, ընդհանուր առմամբ՝ «մարմնի լեզվով»: Դրանք կոչվում են խոսութային լրացնողներ (discourse fillers): Երբեմն լռությունը ներկայանում է ձայնային հնչյունների լրիվ բացակայությամբ: Սակայն, այդպիսի լռությանը նույնպես նախորդում կամ հաջորդում է որևէ խոսքային կամ ոչ խոսքային միջոցներով արտահայտվող իրադրություն:

Չատկանշական է, որ օտարալեզու բանավոր խոսքի ուսուցումը պետք է ներառի լեզվակիրներին բնորոշ միջոցների, արտահայտչամիջոցների ուսուցում, լինի դա հարալեզվական միջոց, թե դադար:

Չետագոտողները տարաբաժանում են նաև «խոսակցական խոսք» և «խոսակցական ոճ» հասկացությունները:

Ինչպես նշում է Գ. Ա. Օրլովը. «բոլոր հայտնի գործառական ոճերը հենվում են արդեն պատրաստի, «հղկված» գրական լեզվի կողավորված գրքային-գրավոր տարատեսակի վրա, այն ժամանակ, երբ գրական-խոսակցական խոսքի հիմքը հանպատրաստից /հիմնականում բանավոր խոսքն է» (Օրлов 1991: 12):

Կարևոր եզրահանգում է այն, որ հնարավոր չէ ուսուցանել խոսակցական ոճ, սակայն խոսակցական կամ ինքնաբերական խոսք կարելի է և անհրաժեշտ է ուսուցանել:

Բանավոր խոսքի ուսուցման տեսանկյունից կարևոր են «խոսակցական անգլերեն» (spoken English) (Brown 1984), «գրական- խոսակցական խոսք» հասկացությունները, որոնք մեկնվում են ի հակակշիռ նորմատիվ անգլերենի (Standard English, Oxford English, BBC English), կամ կողավորված գրական լեզվի (Օրлов 1991: 12):

Բանավոր խոսքի ուսուցման կարևոր պայման է համապատասխան օտարալեզու խոսքային հմտությունների և կարողությունների, հնարների հստակեցումը: Մի կողմից՝ մեթոդիստները փորձում են բացահայտել խոսքային կարողությունների և հմտությունների բովանդակային և գործառական բնութագրերը, մյուս կողմից, հաշվի առնելով դրանք ստեղծում են համապատասխան վարժությունների համակարգ:

Մեթոդիստները խնդիր են դնում ուսումնասիրել շփման խոսքային և ոչ խոսքային միջոցներն ուսուցման տարբեր փուլերում, հստակեցնելով դրանց հարաբերակցությունը: Ակնհայտ է, որ իրական լեզվական միջավայրում դրանք առանձնացնել հնարավոր չէ: Սակայն ուսումնական պայմաններում ոչ խոսքային միջոցների ուսուցումը կամ մոռացության է տրված կամ մղված է հետին պլան անգամ ուսուցման ավարտական փուլում:

Գ. Վ. Կրետինանայի կարծիքով, ուսուցման ավարտական փուլում բանավոր խոսքի զարգացումը պահանջում է նշված միջոցների փոխկապակցված ուսուցում (Кретинина 2002: 96): Օտար լեզուների ֆակուլտետում ոչ խոսքային միջոցների

ուսուցումը պետք է դիտարկվի կոնկրետ բանավոր խոսքի գործառական-ժանրային առանձնահատկությունների տեսանկյունից:

Օտարալեզու բանավոր խոսքի զարգացման կարևոր պայման է նաև ոչ խոսքային միջոցների տեսակների ուսուցումը: Այդ առումով կարևորվում են էմբլեմները<sup>1</sup>, որոնք ներկայացնում են ժեստերի միջոցով տարբեր հասկացություններ: Ինչ-որ առումով, դրանք գործառական մակարդակում հավասարվում են բառին, երբ ձեռքերի շարժումով ցույց են տալիս առարկաների ծավալն ու ձևը (Ekman, Friesen 1969):

Բանավոր խոսքի ուսուցման կարևոր միջոցներ են կարգավորիչները, որոնք ներկայացնում են շարժումներ, որոնք օգնում են վերահսկել կամ կարգավորել խոսքի իմաստը: Դա կարող է լինել գլխի *այո* կամ *ոչ* նշանակող շարժում, *համաձայնություն* կամ *ողջույն* նշանակող իրանի խոնարհում, զարմանք, զայրույթ, խոսքի ավարտ նշանակող աչքերի կկոծում, թարթել և այլն: Բանավոր խոսքի հուզականության կարևոր ցուցիչ են աֆեկտիվները, որոնք արտահայտում են խոսողի հուզագգայական վիճակը: Դրանց միջոցով հաղորդակցվողները կարողանում են փոխանցել իրենց զարմանքը, զայրույթը, դժգոհությունը և այլն: Հաղորդակցման ժամանակ օգտագործվում է դիմախաղը, հոնքերի, շուրթերի դիրքը, աչքերի արտահայտությունը, ինչպես նաև ձեռքերի շարժումը, որոնք նույնպես ցույց են տալիս մարդու հուզական վիճակը:

Ինչպես նշում է Գ. Վ. Կրետինինան. «ինչարտաբերական, հնչյունաբանական մակարդակում հաղորդակցման կամ շփման միջոցների ուսուցումը հնարավոր չէ իրականացնել առանց ոչ խոսքային միջոցների ուսուցման, քանի որ առօրյա խոսքին բնորոշ ամեն մի շեշտի, հնչերանգի, ձայներանգի, առոգանական փոփոխությունների, դադարի և տատանման համապատասխանում է որոշակի ժեստ, դիմախաղ, մարմնի շարժում: Այստեղ կարևոր է հստակեցնել, թե լեզվաբանական գիտելիքները ուսուցման որ փուլում, ինչ ընթացակարգերով են ուսուցանվում, քանի որ խոսքային հմտությունները միշտ չէ որ հիմնվում են որոշակի գիտելիքների վրա: Ավելին, լեզվակիրները ընդհանրապես դրա կարիքը չունեն» (Кретинина 2002: 102):

---

*լատ. emblema*

1. Խորհրդապատկեր՝ ինչ-որ գաղափարի պայմանական նշան:  
2. Չինանշան:  
3. Դրոշմանիշ, դրոշմապատկեր:



## 2. Բանավոր խոսքի ուսուցման լեզվական և հարալեզվական միջոցներ

Հաղորդակցական մոտեցման շրջանակներում վաղուց է լուծված բանավոր խոսքի ուսուցման նպատակներն ու խնդիրները: Այդ խնդիրները շարունակական ճշգրտման անհրաժեշտություն ունեն, կախված այն բանից, թե որտեղ, ինչ դասընթացի շրջանակներում է իրականացվում անգլերենի ուսուցումը:

Ուսումնական պայմաններում բանավոր խոսքի ուսուցմանը խոչընդոտում է հատկապես գործաբանական, ճանաչողական և լեզվական կոմպետենցիաների զարգացման ոչ բավարար մակարդակը: Խնդիր է դրվում հետևողականորեն ուսուցանել անգլերենի հարալեզվական միջոցները, որոնք ինչպես ասվեց վերը, հրապարակային խոսքի կարևոր բաղադրիչ են: Այսինքն՝ խնդիր է դրվում սովորեցնել «Մարմնի» լեզուն: Մի կողմից, «մարմնի» կամ շարժումների լեզուն կարող է հասկանալի լինել անգամ սկսնակ ուսումնասիրողներին: Մյուս կողմից, հատկապես ենթագիտակցական մակարդակում սովորողը կարող է բազում նրբություններ, իմաստային նրբերանգներ չհասկանալ:

Բոլորին հայտնի ձայնարկությունները կարող են հնդեվրոպական լեզուներում համընկնել և տարբերվել: Ընդ որում, հնչյունական նմանությունը կարող է լինել խաբուսիկ: Օրինակ՝ հայերը ասում են՝ սուս, իսկ անգլիացիները՝ «sh»: «s-s-s» -ը ասելով անգլիացիները համընդհանուր անհամաձայնություն են հայտնում: *Jerk* հայերեն *յըղկն* է: Չնայած զգվանք արտահայտելիս անգլիացիները ասում են 'ugh': Հայերենում ուխ-ը հրճվանքի նշան է (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ., 2005, 103):

Առոգանական միջոցների օգտագործումը նույնպես հարալեզվական է, չնայած լեզվի հնչյունաբանական կանոնավոր համակարգից դուրս են: Դրանց կիրառման ընթացքում կարևոր դեր են խաղում հնչյունների երկարությունը, տևողությունն ու շեշտը, օրինակ՝

ձայնի որակը (կոպիտ, հևոցով, ականջ ծակող և այլն),

ձայնի բարձրությունը (ճչոց, նվնվոց, փնթփնթոց),

ձայնի ուժը (շնչոց, մրթմրթոց, գոռոց, և այլն),

երկարությունը (օրինակ. «Շա<sup>-</sup>ա<sup>-</sup>ա<sup>-</sup> տ լավ է»):

Չաճախ հարալեզվական արդյունքի հնարավոր է հասնել ձայնի բարձրության, երկարության, ձայնի ուժի և որակի համակցությամբ» (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ., 2005, 103):

Չետազոտողներն առնաձևացնում են ժեստերի հետևյալ գործառույթները՝ կրկնության կամ ակտուալ խոսքային տեղեկատվության կրկնապատկումը /մատով, աչքերով, գլխով ցույց տալը/, խոսքային արտահայտության փոխարինումը /գլխով անելը, մատը շուրթերին տանելը. «լռի՛ր, ոչ մի խոսք»/, իմաստային առումով խոսքի լրացումը /մատով սպառնալը՝ դե՛ կտեսնես, խոսքային շփման կարգավորման դերը կամ խոսքը շարունակելու միջոցները, այսինքն՝ ֆատիկ կամ խոսքարկման գործառույթը / պարբերաբար կրկնելով շփման որևէ մասնակցի գլխի շարժումը: Նշվում է նաև, որ ժեստերը կարող են հակասել խոսքային արտահայտությանը (Григорьева 2001):

Բանավոր խոսքի ուսուցման գործընթացում կարևոր է ուսումնասիրել լեզվակիրների զգացմունքների արտահայտման միջոցները, հաշվի առնելով այն, որ զգացմունքները տարբեր ազգերի մոտ տարբեր ձևով են արտահայտվում:

Այսպիսով, անգլերեն բանավոր խոսքի ուսուցումը կարող է լինել արդյունավետ, եթե խոսքային միջոցների ուսուցումը համակցվում է հարալեզվական միջոցների ուսուցմամբ:

Ինչպես հայտնի է օտար լեզուների դասավադման մեթոդիկայի պատմությունից, բանավոր և գրավոր խոսքի տեսակները տարբեր գործառույթներ են կատարում: Բանավոր խոսքը հիմնականում գործառնում է առօրյա խոսքի, զրույցի իրադրությունում: Գրավոր խոսքը հիմնականում լինում է գործարարական, գիտական և ուղղված չի կոնկրետ զրուցակի: Բանավոր խոսքին բնորոշ է անմիջական մասնակցությունը, ապրումակցումը:

Բանավոր խոսքի ժամանակ զրուցակիցները կապված են լինում ընդհանուր իրադրությամբ և երբեմն իրար հասկանում է կես խոսքից:

Խոսակցական խոսքը իրադրային է, իսկ լեզվակիրներին բնորոշ տարբեր խոսքային իրադրությունները լավագույնս ներկայացնում են ֆիլմերը: Այդ պատճառով անգլերեն խոսակցական բառապաշարի ուսուցումը բավականին արդյունավետ է ֆիլմերի միջոցով իրականացնելը: Ավելին, գեղարվեստական ֆիլմերում կարելի է հանդիպել այնպիսի առօրյա-խոսակցական արտահայտությունների, որոնք հազվադեպ են հանդիպում նույնիսկ անգլախոս երկրներում տպագրվող դասագրքերում: Ինչպես գիտենք հաղորդակցումը կարող է լինել տեղեկավական և ֆատիկ կամ խոսքարկող: Այս

առումով մեծ առժեք են ներկայացնում ժամանակակից թեմաներով նկարահանված ֆիլմերը, որոնք ներկայացնում են թե խոսքային-տեղեկատվական, թե ֆատիկ հաղորդակցման միջոցներ: Բնագրային գեղարվեստական ֆիլմերը խոսքարկվող հաղորդակցական բազմաթիվ ակտեր են պարունակում, որոնք կարելի է հանդիպել լեզվակիրների թե երկխոսություններում, թե մենախոսություններում: Ինչպես նշում է Էլիոթը: 'ամեն մի լեզվական հանրություն տիրապետում է որոշակի խոսքարկվող կամ ոչ տեղեկատվական ռազմավարության, որոնք կարող են լինել համագործակցային և ոչ համագործակցային բնույթի'(Эйлотт 2004:164):

Անհերքելի է , որ ֆիլմերը հարուստ են այնպիսի արտահայտություններով, որոնք չեն ուսուցանվում դասագրքերի միջոցով, այդ իսկ պատճառով անգլերենի խոսակցական բառապաշարի ուսուցումը բնագրային ֆիլմերի միջոցով կարող է լինել ավելի արդյունավետ, եթե սովորողները նախքան ֆիլմի դիտումը ծանոթանան և յուրացնեն խոսակցական կարծրատիպային, վարվեցողության, դարձվածքային բառերը, արտահայտությունները, ինչպես նաև հարալեզվական բնույթի փոխներթափանցումները:

Այսպիսով անգլերեն բանավոր խոսքի ուսուցումը հնարավոր չէ իրականացնել առանց ֆատիկ հաղորդակցության պարզագույն տարրերը յուրացնելու, քանզի հաղորդակցությունն իրականացվում է ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային, հարալեզվական միջոցներով:

### **3. Անգլերեն բանավոր հաղորդակցման արդյունավետությունն ապահովող գործոնները**

Անգլերեն ուսումնասիրողները հաճախ բողոքում են, որ, չնայած այն բանի, որ արդեն երկար տարիներ սովորում են անգլերեն, այնուամենայնիվ, լավ չեն հասկանում անգլերեն բանավոր խոսքը և անվստահություն են զգում խոսակցության մեջ ներգրավվելիս: Դա կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքով: Առաջին և կարևոր պատճառներից մեկն այն է, որ սովորողները փորձում են անգլերենով լսած միտքը թարգմանել իրենց մայրենի լեզվով կամ հակառակը՝ հաղորդակցվելիս մտածում են մայրենի լեզվով, ապա փորձում թարգմանել: Այսպիսի մոտեցումը խոչընդոտում է արագ և ճիշտ ընկալելուն, ինչպես նաև բանավոր հաղորդակցությանը: Անգլերենի իմացությունը պետք է հասցնել այնպիսի մակարդակի, որ սովորողը սկսի մտածել անգլերենով, իսկ բանավոր խոսքը լսելիս փորձի կռահել ասվածի իմաստը, նույնիսկ, եթե չգիտի այս կամ այն բառը: Հաղորդակցվելու ժամանակ սովորողների մոտ անինքնավստահություն կարող է առաջանալ, եթե նրանք ծանոթ չեն խոսակցության նյութին, տվյալ թեմայի շուրջ չունեն համապատասխան բառապաշար կամ պարզապես վախենում են սխալվելուց: Հետևաբար ուսուցիչը պետք է այնպիսի մթնոլորտ ստեղծի, որ սովորողներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերն ու չվախենան սխալներ գործելուց:

Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար շատ կարևոր է խոսքային գործոնների հաշվառումը: Այս տեսանկյունից առանձնանում են երեք կարևոր գործոններ, որոնք հաղորդակցության ժամանակ նպաստում են խոսքի սահունությանը: Դրանք են՝ իմացական, զգայական, կատարման (performance):

*Իմացական գործոնները ներառում են.*

- Ծանոթացում նյութին. Որքան ծանոթ է խոսակցության նյութը, այնքան բովանդակալից է ընթանում խոսակցությունը: Բնականաբար, ուսուցչի խնդիրն է՝ թեմաներ ընտրելիս հաշվի առնել լսարանի կարծիքը, նախասիրությունները, տարիքային հոգեբանական գործոնները:

- Ծանոթացում ժանրին. ժանրին ծանոթ լինելը նպաստում է խոսքի հեշտ ըմբռնմանը:
- Ծանոթացում գրուցակցի հետ. Որքան լավ ես ճանաչում հաղորդակցիդ, այնքան ավելի հեշտ է նրա հետ երկխոսելը: Ուստի ուսուցիչը պետք է կարողանա ինամքով կազմակերպել գուգաշխատանքներ, խմբաշխատանքներ, որոնցում սովորողները հնարավորինս ակտիվ հաղորդակցվեն:

*Զգայական գործոններ.*

Ընդհանուր առմամբ, նախնական տրամադրվածությունը խոսակցության նյութի կամ հենց խոսակցի նկատմամբ ապահովում կամ ձախողում է խոսքային փոխներգործությունը: Բնականաբար, ուսուցիչը պետք է խթանի սովորողների՝ սեփական ասելիքը ձևավորելու և այն փոխանցելու ներքին ցանկությունը, ինչպես նաև՝ հաղորդակցի անձը, նրա կարծիքը հարգելու, հանդուրժելու կարողությունը, այսինքն՝ հնարավորինս ապահովի դրական, անկաշկանդ ու հարգալից փոխըմբռնման ուսուցողական միջավայր դասարանում:


*Կատարման գործոնները ներառում են.*

- Խոսելաձևը. Դեմ առ դեմ խոսելով, երբեմն նաև մարմնի լեզուն (ժեստեր, աչքի կոնտակտ, դիմախաղ, ձեռքի, ոտքի շարժումներ) գործածելով՝ կարելի է ավելի արդյունավետ հաղորդակցություն ապահովել:
- Համագործակցելու աստիճանը. Որքան սովորողները միասնական ու համագործակցող են, այնքան ավելի շատ ասելիք կունենան, առավել հարուստ ու բովանդակալից կդառնա նրանց ներկայացրած նյութը: Մյուս կողմից էլ՝ նրանք գիտակցում են միմյանց օգնելու կարևորությունը, քանի որ հավասար պատասխանատվություն են կրում աշխատանքի համար:
- Ժամանակի արդյունավետ պլանավորումը. Սա ևս շատ կարևոր գործոն է, քանզի միայն ժամանակի ճիշտ և արդյունավետ պլանավորման պարագայում կարելի է լավ պատրաստվել խոսակցությանը կամ ներկայացմանը (presentation): Որքան շատ ժամանակ լինի պատրաստվելու, այնքան ավելի սահուն, անսխալ ու գրագետ կլինի խոսքը:

- Միջավայրային իրավիճակներ. Դրանք կարող են տարբեր լինել, օրինակ, բարձր երաժշտության ներքո կամ վատ ակունտիկ պայմաններում խոսելը, բնականաբար, ոչ բոլորին է հարմար կամ դյուրին (անգամ հայերենով): Այստեղից կարելի է հետևել՝ դասարանի կամ լսարանի հարմարավետությունը նույնպես էական գործոն է:
- Խոսելու շարժառիթը. Յուրաքանչյուր օտար լեզվի ուսուցանման հիմքում ընկած է սովորողների հաղորդակցմանը նպաստող իրադրությունների ստեղծման սկզբունքը: Սովորողը միշտ պետք է ունենա խոսելու շարժառիթ, նաև խոսելու դրդապատճառ: Եվ որքան ավելի համոզիչ է այդ դրդապատճառը, այդքան ավելի արդյունավետ կլինի հաղորդակցությունը : Բանավոր խոսքը մարդու մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Բանավոր խոսքի զարգացումը տեղի է ունենում մարդու ամբողջ կյանքի ընթացքում՝ իր վրա կրելով հասարակության ընդհանուր զարգացածության ամբողջական կնիքը: Բանավոր խոսքի անընդհատ մշակումը պարտադիր, անընդհատ և հետևողական գործընթաց է: Դրա զարգացումը հենվում է բացառապես լեզվի իրական գործառնության վրա: Ահա և համառոտ ներկայացրինք այն գործոնները, որոնց հաշվառումը կարևոր է բանավոր խոսքում: Սակայն նշենք նաև, որ դրանցով չեն սահմանափակվում գրույցի արդյունավետությունը կանխատեսելը կամ երաշխավորելը, քանզի գոյություն ունեն նաև անձնային-հոգեբանական գործոններ: Այսպես, միշտ չէ, որ շտապելը կարող է բացասաբար ներգործել: Նույնիսկ որոշ գրուցակիցներ ավելի սահուն և համակարգված են ծավալում խոսակցությունը, երբ նրանք ունեն ժամանակի և հասցնելու խնդիր: Բացի այդ, բանավոր խոսքի իրականացման ժամանակ կարևոր է նաև ֆիզիոլոգիական գործոնը, օրինակ, հաղորդակցի տրամադրությունը, հոգևածությունը, առողջական վիճակը և այլն: Բանավոր խոսքի հաջողվածության համար կարևորվում են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գիտելիքները: Այսինքն՝ արդյունավետ գրույց ունենալու համար անհրաժեշտ է ունենալ խոսակցության թեմայի վերաբերյալ հիմնային գիտելիքներ, ինչպես նաև դատողական կամ դիսկուրսային գիտելիքներ, գիտելիքներ խոսքի

գործընթացի մասին և վերջապես, քերականական, բառապաշարային և հնչյունաբանական գիտելիքներ: Վերոնշյալ բաղադրիչների հաշվառումը կարևոր նախադրյալ է սովորողների բանավոր հաղորդակցական կարողությունները զարգացնելու գործում և պահանջում է համակարգված մոտեցում: Ուստի անհրաժեշտ է՝ ժամանակ առ ժամանակ վերանայել ու լրամշակել ուսուցման առկա մեթոդները, մոտեցումներն ու տեխնոլոգիաները, որոնք, պայմանավորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով, կարող են կորցնել իրենց արդյունավետությունն ու արդիականությունը: Ակնհայտ է, որ դրանց ճիշտ ընտրությունն ու կիրառումը հաղորդակցական ուսուցման գերակայության պայմաններում նպատակաուղղված է ուսուցման/ուսումնառության արդյունավետության բարձրացմանը, սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացման:

### Գծապատկեր 1




Այսպիսով, ուսուցման ավանդական մեթոդները պետք է համալրել նաև նոր ակտիվ մեթոդներով, որոնք կխթանեն սովորողների հետաքրքրությունն ու

սովորելու ցանկությունը, կնպաստեն նյութի արագ և հեշտ ընկալմանն ու մտապահմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինտերակտիվ ուսուցումը սովորողներին օգնում է ոչ միայն ավելի արագ ընկալել նոր նյութը, այլև ավելի լավ մտապահել այն:

Ըստ ներկայացրած սխեմայի պասիվ ուսուցման արդյունքում սովորողները մտապահում են նյութի միայն 30%-ը, իսկ ինտերակտիվ ուսուցումը նպաստում է նյութի 90%-ի մտապահմանը: Այսինքն, սովորողները առավել լավ հիշում են այն, ինչը տեղի է ունենում իրենց անմիջական մասնակցությամբ/ իրադրային շփում/ քան այն ամենը, ինչ տեսնում կամ լսում են:



<http://teahernoella.weeb1.oom/dales-cone-of-experience.html>

Ինչպես նշել է ուկրաինացի ականավոր մանկավարժ և գրող Վ. Ա. Սուխոմլինսկին «Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ



պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»): Հետևաբար, ուսուցիչը պետք է տեղյակ լինի, թե ինչպիսի առավելություններ են տալիս տվյալ մեթոդի կիրառումը, ինչպես նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասավանդման գործընթացում: Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժական ռազմավարություններն ու մոտեցումները 21-րդ դարի ուսուցչի համար նորանոր հնարավորություններ են ստեղծում՝ վերանայելու ուսուցման մեթոդները, նպատակներն ու խնդիրները: Հարափոփող կյանքը թելադրում է իր պահանջները և ուսուցիչներին ստիպում լինել ստողծագործող, տիրապետել մանկավարժական առաջավոր տեխնոլոգիաներին, շարունակաբար բարելավել մասնագիտական որակները, ուսուցմանը զուգահեռ զբաղվել հետազոտական աշխատանքներով:

Օտարալեզու բանավոր խոսքի ուսուցումը բարդ գործընթացն է, քանի որ ենթադրում է խոսակցական, գրական, ինչպես նաև գիտական խոսքի համադրում, համակցում: Օտարալեզու նորմատիվ և ոչ նորմատիվ բանավոր խոսքի առաձևահատկությունների բացահայտումը հնարավոր է իրականացնել խոսքային և ոչ խոսքային շփման միջոցների կիրառման մակարդակում: Այդ առումով կարևորվում է նաև բանավոր խոսքի ներկայացման հուզական ֆոնի մոդելավորելը և վերարտադրելը:

Այսպիսով, ամփոփելով այսօր կարող ենք եզրակացնել՝

1. Անգլերենի բանավոր խոսքի ուսուցումը պահանջում է խոսքային և ոչ խոսքային միջոցների համակցված, համակարգված ուսուցում:
2. Բանավոր խոսքի ուսուցման շրջանակներում մեծ տեղ պետք է հատկացվի առօրյա խոսքին բնորոշ հնչերանգի, ձայներանգի, շեշտի, մեղեդայնության, առոգանության և այլ հնչունական երևույթների ուսուցման վրա:
3. Օտարալեզու բանավոր խոսք զարգացնելու համար ուսուցիչը պետք է չբավարարվի միայն իր մանկավարժական, մեթոդական, լեզվաբանական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: Նա պետք է տիրապետի նաև ճարտասանական արվեստի տարրերին, համադրի դիդակտիկական մատչելիության, հաջորդականության, ակտիվության սկզբունքները:
4. Հոգեբանամանկավարժական մակարդակում նա պետք է այնպես կառուցի իր խոսքը, որ ստեղծի դրական հուզական մթնոլորտ, խթանի դրանով սովորողների խոսքային գործունեությունը:
5. Մեթոդական մակարդակում նա պետք է կարողանա կիրառել հաղորդակցական մոտեցման սկզբունքները, ընտրելով բնագրային տեքստեր, մոդելավորելով իրական խոսքային իրադրություններ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Յ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան 2014, էջ 13-15:
2. Ռոմանազերմանական լեզվաբանության հիմնախնդիրներ, խմբ.՝ Ս. Տոնյան և ուրիշներ, Լինգվա, Երեվան, 2010, 101-111 էջ:
3. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. տեսություններ, մեթոդներ, գնահատում. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Այրեքս, Երևան 2003:
4. Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես, խմբ. Ելենա Երզնկյան, 2013, 41-64 էջ:
5. Антипова, А. М. О взаимодействии вербальных и невербальных средств общения в спонтанной разговорной речи //Проблема спонтанной разговорной речи (МГИИЯ). Вып. 332. М. 1989 – с. 61-75.
6. Ростова Е. С., Тумакова Н. А. Психологические и психолингвистические особенности устной речи (диалогическая форма) // Молодой ученый. — 2015. — № 10. — С. 1278–1280.
7. British Council "Ideas for the developing teachers", 2013
8. English Dictionary for advanced learners, 2002, Mammillan
29. Soars J./ L., Teacher's book, Upper-intermediate, 1987, Oxford University Press

## Համացանցային աղբյուրներ

31. <http://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352>
32. <https://www.boundless.com/communications/textbooks/delivering-the-speech-12/>
33. <http://educate.au.dk/en/examples-of-practice/studiestrategier/exercise-presentation/>
34. <http://teahernoella.weebly.com/dales-cone-of-experience.html>